# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 սեպտեմբերի 2014թ. թիվ 341-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ԶՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.24 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

Լոռու մարզում 2014թ. ձմեռային զորակոչը կազմակերպելու և անցկացնելու նպատակով՝

1. Ստեղծել տարածաշրջանային զինվորական կոմիսարիատների տեղական զորակոչային հանձնաժողովներ և հաստատել կազմերը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի աշխատանքներն սկսել 2014թ. սեպտեմբերի 26-ից և ավարտել 2015թ. հունվարի 31-ին:

3. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝

1) Տարածաշրջանային զինվորական կոմիսարիատների հայտերի համաձայն ստեղծել բժշկական հանձնաժողովների հիմնական և փոխարինող կազմեր:

2) Զորակոչիկների ստացիոնար փորձաքննություն իրականացնելու նպատակով՝ զինվորական կոմիսարիատներն ապահովել համապատասխան սարքավորումներով (սոնոգրաֆիա, արյան խումբ և արյան ՌՀ, ընդհանուր հետազոտություններ):

3) Հանձնարարել համապատասխան համաբուժարանների տնօրեններին՝ ըստ զորակոչի ենթակա զորակոչիկների ցուցակների, կատարել հետազոտություններ և այդ մասին զինկոմիսարիատներ ներկայացնել համապատասխան փաստաթղթեր մինչև ձմեռային զորակոչի բժշկական հանձնաժողովների աշխատանքների սկսելը:

4) Կազմակերպել զորակոչիկների բժշկական փորձաքննության, բժշկական օգնության և սպասարկման գործընթացը:

4. Մարզի համայնքների ղեկավարներին՝

Տարածաշրջանային զինվորական կոմիսարիատներին աջակցել զորակոչիկներին ծանուցագրերի հանձնման և նրանց զինկոմիսարիատներ ներկայանալու գործընթացում:

5. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետին՝

Ձեռնարկել միջոցառումներ զինվորական ծառայությունից խուսափող զորակոչիկների հայտնաբերման և զորակոչային տեղամասերում հասարակական կարգի պահպանության ուղղությամբ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. սեպտեմբերի 25
ք.Վանաձոր